


Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵՊԻՊՏՈՍ
Տարեկան դրոշմը 30
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան ֆրանկ 10

Բաժանորդ 3ԱԵԼՈՒՍԵՆՆԵՐՈՒ փոխարէն վճարումէ գրեմ պիտի ըլլան.

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր հասցեայով:

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքին խնդրոց հարկարկէք եւ զիսկ ներքին տարածքէն հասցեայով քերթիս Մասնաւորին, որ է՝

Բաժանորդագրութեան
ԵՂԻՑԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ՊԵՐՏԻ ՓԵՓԵԱԶԵԱՆ

— ԿԸ ՇՐՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ՕՐԵՐԸ — — Զօղումագիրները ուղղակի պատասխանուի են իրենց գրածներուն — — ZUSE 20 ՓԱՒԱ ՈՂՁ —

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐԸ

Նախորդ գրութեան մէջ ըսինք, որ քէն թէ՛ Օրմանեան պատրիարքը Ազգ. Սահմանադրութիւնը թաղելու փորձողներուն համար գերեզմանափորի պաշտօնը ստանձնեց ու փոստելու յաջողեցաւ ալ գրեթէ: Թէպէտեւ ըստ սմանց իրաւացի չ'պիտի սեպուի արդի Պատրիարքին արգարացուցիչ կամ մեղմացուցիչ փաստերը առանց որոշապէս լսելու՝ զինքը հրապարակաւ մեղադրելու ձեռնարկը, սակայն իր յոյս տալիք բոլոր պատճառներէն ալ շատ աւելի պերճալիս են իր ծանօթ գործակալները, և ատանց նոյնչափ ծանօթ վաստակներ արդիւնքները:

Օրմանեանի պատրիարքութեան օրով Սահմանադրութեան օրէնքներուն տակն և ուղւոյն խեղաթիւրուելը, ձգախօսի նման ընդլայնելը, սեղմելն ու տարածուելը, երբեմն անտեսանելի ըլլալու չափ հիւսիսանալը, ու երբեմն Մասնաւոր ձեռնարկաւ և բարձրաբերձ գագաթներուն հետ ամպերուն մէջ ծրարուելը, անժխտելիօրէն կը հաստատեն թէ՛ Պատրիարքը ո՞ր աստիճան կարեւորութենէ ձգած է Ազգային օրէնքները ու Եկեղեցին ալ...: Եւ այդ երկու մեր ազգութիւնը — Հայութիւնը — յատկանշող « պահպան հրեշտակները » մինչև ո՞ր վճիռն եւ զերքները տարած հասուցած է: Անզոր կեց մը՝ և հաս՝ ոչ ևս է անցեալ փառապանծ դարերու մը նացող Հայութիւնը...: Ազգային փրկիչներ՝, աղէ՛կ միտք առէք այս մէկ երկու տողերը...:

Հոս պզտիկ օրինակ մը՝ վերը ըսուածները հաստատելու համար: Ամենապատիւ Սրբազան պատրիարքը թող իր Իլւաններուն մէջ հետախուզէ Աղէքսանդրիոյ Թաղ. Խորհրդոյն կողմէ 4 Մարտ 1898 թրւաւան և 59 համար նամակը իրեն ուղղուած, և Նորին Վսեմութիւն Պօղոս բաշա ալ՝ իր թղթածրարներուն մէջ փնտռել տայ դարձեալ Աղէքսանդրիոյ Խորհրդոյն 29 Նոյեմբեր 1897 թրւակիր և 1643 համար գրութիւնը, մենք ալ ձեռքի

տակ ունինք « Արշալոյս » ի 220 թրթիւր: Այն ատեն դիւրաւ պիտի հասկցուի թէ՛ ի՞նչ կը նշանակէ վերջերս հրատարակուած քանի մը յօդուածէ բաղկացեալ նորաձոյլ Կանոնագիրը, որ մեր Սրբազան պատրիարքը Ն. Վսեմութիւն Պօղոս բաշայի մոզիչ և հմայիչ անունին ներքեւ գնելով Աղէքսանդրիացիներուն հրատարակուած է...:

« Արշալոյս » ի սուղ էջերուն մէջ այդ ամէն եղելութիւնները մանրամասնել անկարելի է. սակայն՝ ամէն ազգասէր հայու սիրտն ալ ինքնարեքարար կրնայ վկայել թէ՛ Ս. Պատրիարքին մտածելակերպն է՝ ի՞նչ մէ վերջը ջրհեղեղ թող ըլլայ ինչ:

Ս. պատրիարքը բացաւ սիրագործութեանց դարագլուխը՝ ու իր անպարտաճանաչութեան օրինակներովը քաջալերեց իրմէ աւելի այդ տարտարոսային վիճակին ստեղծուելուն ցանկացողները, որոնք մեր մէջ թուով քիչ չեն գոթաղարար, մի որ և է Տէր այսինչէ և Տէր Բարսեղէ սկսեալ: Որոնք հիմայ եկեղեցիէն շատ տարբեր բաներու վրայ մտածել ըսկըսած են...:

Օրմանեանի պատրիարքը աղւորիկ ժեպ մը ըրաւ իր ներքին դիտումները ծածկելու նպատակաւ ու Պատրիարքարանի պատնէշներէն ներս յորդեցող նեպոտականութիւնը: Թաշալայական ու ինամիական իշխանութիւնն էր որ ազգին զէկը իր ձեռքին մէջ առաւ: Ասանց ստորագծումները եթէ հիմայ մենք չենք ընել, պատճառը այն է որ մեզմէ աւելի իրազէկ գրիչներ արգէն խնդիրը ձեռք առած են...:

Քիչ մը վերը « Եկեղեցւոյն ալ... » ըսինք: Ի՞նչ էր սա կեզր. կրօնական ժողով ըսուած ոչնչութիւններուն նոր ծրագրած « ամուսնալուծման » օրէնքները: Ս. պատրիարքը իր նախագահութեան տակ եղած այդ լղրճուկ որոշումներովը միթէ հայ եկեղեցւոյ « Եթէ խորհուրդներէն » միոյն, Ս. պատրիարք, նուիրականութիւնը ցիտերուն մէջ չէ՞ր գլորել: Ի՞նչ կը նշանակեն՝ առանձնական, միանձնական, անհասակաւ և հրապարակային, ի գիշերի եւ ի տոբնջեան ևն. ևն. շարադրակութիւնները միթէ ըստը հայրն ալ « կասա » ու թեան կը հրաւիրէ, վրէժ լուծելու

համար անշուշտ՝ իրեն դէմ եղած օրինաւոր քննադատութիւններուն համար, որ իրեն հովութեան յանձնուած ժողովուրդին բանիմաց մասը կուղղէ իրեն գործելակերպերուն դէմ: Ամօ՞թ իրեն...:

Նախատինք մը, անքաւելի՛ նախատինք մը չէ՞ այս ընդհանուր հայութեան հասցէին ուղղուած, դէպի այլասերում առաջնորդելու համար զայն՝ ապականելով միանգամայն անոր ազնիւ արիւնը...:

Մենք դառնանք Եգիպտոս, ուր գրեթէ համահաւասար չարչարքներու ենթարկուած է Ազգային Սահմանադրութեան օրին և տարածուած պարագայ մը եթէ գոյութիւն ունի, այն ալ սա՛ է որ՝ կերպով մը ասկէ ծնանելիք պատասխանատուութիւնները Ն. Վսեմութիւն Պօղոս Բաշա Նուպարի մը — Հայերու ամենէն պատուական Հայունանունին տակ դրուեցան այս վերջին մէկ երկու տարիներուն մէջ: Եւ որովհետեւ Վսեմ. Պօղոս Բաշա ծայրայեղօրէն օրինասէր և ուղղամիտ անձնաւորութիւն մ'է, կը կարծենք թէ՛ սխալած եղաւ իր մոզիչ և ամենափայլուն անունին և պատասխանատուութեանը տակ առնելով Մեր պատրիարքին կողմէ փերզակի հաշիւներով պատրաստուած իրերայնորդ ծրագիրներն, հրահանգներն, կանոնադրութիւններն ու նօթերը, որոնք ճարպիկ հնարամիտներու կողմէ շահագործուելու նիւթ եղած են հիմայ Եգիպտոսի մէջ...:

Մեծն Նուպարի արժանաժանագ որդին, վսեմ. Պօղոս բաշա, — որ աննշան բացառութեամբ — ընդհանուր հայութեան համարումը ինչ ու ինչ կը վայելէ, եթէ իր ունեցած օրինասիրական ընտիր ընտիր ձեռքատումներուն, և անգնահատելի ու չքնաղ յատկութիւններուն միացուցած ըլլար իր մայրենի լեզուին, — հայերէնի — հմտութիւնը, տարակոյս չէր մնար թէ՛ հիմայ Եգիպտոսը բոլորովին զերծ պիտի մնար հայ համայնքին դժգոհութեանը արժանանալու շատ մը պատճառներ տուող Պատրիարքի մը երերայնորդ ենթերկները իր անունին ներքեւ դրուե-

լէ, և ապաղայ պատմութեան առջեւ պատասխանատուութիւն մը հրաւիրելէ էր վրայ:

Եգիպտոսի մէջ տարիներէ ի վեր Ազգ. Սահմանադրութիւնը շայլամի մը (տէվէ գուշու) փետուրներովը զարդարուած ըլլար կարծես: Եթէ « Եւս կրել » առաջարկուի անոր, եւ « Թուսն » եմ կ'ըսէ: Եթէ թուսիլ առաջարկուի՝ եւ « ուղա » եմ կ'ըսէ: Եթէ Նորին Վսեմութիւնը միջոց ունենար այս ամենը մանրագնին հետազոտելու և մօտէն ուսումնասիրելու...: Իսկ ի՞նչպէս մեկնել այն հոյակապ անարդարութիւններն ու ապօրինութիւնները, որ իր շուքին ու անունին տակ կը գործուին...:

« Արշալոյս » Եգիպտոսայ թերթերուն մէջ միակը եղած է որ 1901 ին՝ Գարտիքի Իտալական փոխ-Հիւպատոսին մէկ դրաւոր փափաքէն թեղադրուելով հրատարակէ Նորին վսեմութեան Լուսանկարը՝ անոր հայրենասիրութեան և բարձր հանճարի մասին կարգ մը տեղեկութիւններ կցելով և զրկելով յիշեալ փոխ-Հիւպատոսին, ուստի կը փափաքի որ իր գրածներուն մէջ յուսախար եղած չըլլայ, անկէ վերջն է անշուշտ՝ որ այդ առթիւ սկսուած և շարունակելի մնացած կենսագրական նօթերը պիտի աւարտին:

Մենիկ

ԵՐԿՈՒԻ ԽՕՍԻՔ

ԱՌ ՎՍԵՄ. ԿՈՄՍՆ
ՏԲԹ. ՄԱՔՍ ՏԻ ԳՕԼԱԼԱԹՕ
Պատուարժան Տնօրէն ԲՐՕԿՐԷՆՈՒ օգտաշատ
Օրաթերթի ի Գաղաքիս
Վսեմ. Կոմս.

Ձեր 10 Ապրիլ 908 Ուերթթ օրուան թուոյն մէջ Պ. Լ. Լարենցէ ստացուած նամակ մը հրատարակելու առթիւ, զոր Լորտաքէն ստացած էիք, յիշատակութիւնը կընէք միեւնոյն անձէն ստացուած ուրիշ նամակի մը, Բարիկէն թրուադրեալ, որ Ձեր պաշտօնակիցի երջն մէկը ստացած է:

Կը տարակուսինք որ՝ այդ « պաշտօնակից » բառով թերթիս նմարդութիւնը կ'ակնարկէիք, որովհետեւ մեր թերթին 488 — 11 լրջ թուով, ճրարասայն թուադրեալ — ո՛չ Բարիկէն — նամակի մը մասին ակնարկութիւններ կ'ըսէի:

Դուք՝ Վսեմ՝ Կոմս՝ Պ. Լարենցի նամակին ինտեգրալմենտ - նոյնութեամբ կամ ամբողջովին - հրատարակութիւնը ընկելով՝ զայն կը յանձնարարէք մասնաւորապէս Տեղական Parquet ին եւ Գահիրէի Ոստիկանութեան, զիւրացնելու համար ողբացեալ Արիւսար Արիւսարեանի ոճրոյն մեղակիցները զանելու հետագայութիւնները :

Ձեր բունած ուղղութեան մասին մենք բնաւ դիտողութիւն մը չունինք . եւ չենք ալ ուզեր ո՛ր եւ է դիտողութիւն ընկելու վրայ մտածել : Բայց Ձեր անուղղակի թելադրանքին՝ որ մենք ալ Ձեզի պէս վարուէինք, ատոր դէմ ներեցէք որ յայտարարենք թէ՛ մեր խոնարհ առարկութիւններն ունինք : Որոնց է՛ն գլխաւորներն են :

1. Մենք եզրկտարնակ հայերս, ամենամեծ մասամբ հալածեալ եւ ջախջախեալ, Անգլ. Կառավարութեան տեղւոյն արգարակորով ներկայացուցիչներուն հոգածութեան, եւ Բարձր. Սըտիւին ու Իրեն ստորագասելներուն ազատամտութեան շնորհներուն ապաւինած ենք, քիչ մը ազատ չնչելու համար, պայպակը ունենալով միանգամայն մեր սիրեցեալ Հայրենիքին, որ մեզի համար ԱՒԵՏՍԱՅ երկիրն է :

2. Մենք ո՛ր եւ է պաշտօն չունէինք եզրկտարնակ թիւրակն ոստիկանութեան գործը դիւրացնելու վրայ մտածելու, որովհետեւ վստահ ենք թէ՛ ա՛յնչափ լաւ կազմակերպուած է այն, շնորհիւ Անգլո-եզրկտարնակ Կառավարութեան լայն միջոցներուն, եւ Վսեմ՝ Մէնսֆիլտ Բաշայի խոնական եւ փորձառու շրջանաւարտութեանց :

Թեթեւ հետաքրքրութիւն մը սակայն, պիտի կրնայ անժխտելիօրէն ապացուցանել թէ՛ հակառակ այս ամեն գերազանց առաւելութեանց, դարձեալ կարեւոր չեղումներ ալ կը պատահին . . . հսկող շրջանակներու՝ կողմէ :

3. Մեր էջերը անբաւական էին Աղէքս. Տեղական Դատարանի ոճրադատ Նախնական Ատենին կողմէ՝ թիւ 349 ամբաստանագրոյն համաձայն դատապարտեալի մը պաշտպանութիւնը ստանձնելու, ապահով ենք որ՝ գուր ալ մեզի հետ պիտի բարեհաճէր բսելու թէ՛ ատիկայ մեզի նման՝ Կառավարական կազմը եւ օրէնքները կէտ առ կէտ յարգել ուղղութեամբ համար՝ ձեռնհասութեան խնդիր մըն է :

4. Ձէինք ուզեր միջամտել այն պիտի խնդրներուն, զորս հետէն միայն գիտենք, եւ ատոնց բարոյութիւնը ըմբռնած ենք, մեր ազգին մէջ գոյութիւն ունեցած կուսակցութիւններու օրըստօրէ՛ անկուր անպատեհութիւններէն դատելով : Ազգ մը՝ որ թշուառութեան գագաթնակէտին կ'առաջնորդուի դժբաղդաբար . . .

Բայց քանի որ Ձեր Վսեմութիւնը իր ընթացքովը քաջաբերութիւն կուտայ մեզի, կը փութանք յայտարարել որ Պ. Լարենցի յուսահատող մէկը չերեւիր, եւ մեր անկողնակալութիւնը պատճառելով՝ նոր դրութիւն մը զրկած է մեզի ի հրատարակութիւն՝ այս անգամ Լոնտոնէն : «Բաց նամակ մը» Աղէքսանդրիոյ ազգայիններէն Պ. Միլթան Տոմատեանի. մարդ մը՝ որ ազնիւ է, գործունէայ է, յանձնակատեանն է, եւ ողբացեալ Պ. Արիւսարեանի չափ գրապետ է միանգամայն :

Թերթի մը նմանգրութիւնը չէ կարող կանուխէն գիտնալ թէ՛ զ՛վ իրեն թղթակցութիւն կը զրկէ՛ որպէս զի արդիւն զանոնք, ո եւ է մէկուն իր մասին աննպաստ կասկածներ չ'առաջարկու համար :

Քանի որ մեզի թելադրական օրինակը սուրբ, Ձեր ուրբաթ օրուան թուով, «Արշալոյս» ի առաջիկայ Համարով պիտի հրատարակենք զայն նոյնութեամբ առաջինը եւ վերջինը ըլլալու առաջադրութեամբ առանց ո եւ է պատասխանատուութիւն մեր վրայ առ-

նելու, եւ առանց անոր պարունակութեանց համարիտ գտնուելու, որովհետեւ մեր թերթը ո՛չ կուսակցական թերթ է, եւ ո՛չ ալ ո եւ է կուսակցութեան կը պատկանի : Իր նպատակն է որոշ չափով իր պատկանած ազգին ծառայել է գրական եւ բարոյական կրկին տեսակետներով : Եթէ իր այս ազնիւ գիտաւորութիւններն ալ դժուարութեանց չը բաղխին եւ քաջաբերութիւն գտնեն . . .

Հաճեցէք ընդունիլ, Վսեմ՝ Կոմս, մեր խորին ակնածանաց եւ հիացման արտայայտութիւններն :

Ստորագրութեան հաւանութեամբ
Քարտուղար-ներկայացուցիչ
Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

ՆՈՐԵՐ, ՆԻՒԹԵՐ

Արտասանմանի մեր քերթերը

Արտասանման, այսինքն՝ բաղձացուած ազատութիւն գրելու, խօսելու եւ գործելու : Բայց, ճգնէք խօսիլ ու գործելը, արդեօք կը խորհրդէնք թէ մեր թոռները ի՛նչ պիտի ըսեն մեր վերջինը թերթերու ազարունակութեան վրայ : Եթէ չ'եմ սխալիր, ես տակաւին չտեսայ թերթ մը որ տկար մը, սխալած մը, հալածուած մը, անոք անօգնական մը նոյն իսկ անմեղ մը պաշտպանելու դերը ստանձնած ըլլայ : Պաշտպանելէ հետո, ընդհակառակն, այդ տեսակ խեղճի մը կից մ'աւելի տալ պարծանք եւ փառք համարուած է : Աւելին կայ, եթէ մեր ուժը անբաւական կը տեսնենք զայն բարոյապէս եւ նիւթապէս շախմատի համար, օտարներու ոտքերն ու գըրիչներն ալ փոխ կ'առնենք, կարծելով թէ մեծ հայրենասիրական բան մ'ըրած կ'ըլլանք . ճիշտ, ինչ պէս մեր նախնիք Յունաց Մեծին Կայսեր կամ Պարսկաստանի Արքայից Արքային հուրն ու սուրը կը մուրաշին, Հայրենիքի մէկ մասին խելքը գլուխը բերելու համար : Քաջ գիտենք թէ օտարի այս միջամտութեան հետեանքը, ի՛նչ եղաւ, քաջ գիտենք նաև թէ՛ այսօր ի՛նչ պէս կ'որակենք մեր նախնեաց այդ արարքը . . . Հիմայ, եթէ ո՛չ նոյն դարք, բայց նոյն բարք, եւ այդ է ցաւալին : Սա տարբերութեամբ որ այն ատեն թանձրահոծ ամբողջութիւն մը կը կազմէինք, այսօր երկրիս չորս կողմը ցան ու ցեր կը զեզերինք, այն ատեն դէշ ալէկ գլուխ մ'ունէինք, այսօր ամէն բանէ զուրկ ենք : Ասոր վերջը՝ . . . Պէտք է ըսել Ֆրանսացի ընկերաբանին հետ, «Յորմէհետէ մամուլն ազատ է, ուրիշ բան չ'ընէր, բայց միայն թուղթ մրոտել (փխպարձաթարգմանութեամբ . . .)

Մայիս 4 ի Յոքեյեանը

Ազնուութիւն է մեռելալը չը մոռնալ, բայց պարտականութիւն է կենդանիին վրայ խորհիլ : Արիւսար եւ Լէօ մեր ազգին լաւագոյն մշակներն են, զորս կրնանք բաղդատութեան զնել մի որ եւ է ազգի հանճարեղ գլուխներուն հետ : Առա-

ջինը մեռաւ եւ յիշեցինք մեր անմահ առածը « Կնա՛ մեռիր, եկու՛ր սիրեմ՛ » իսկ երկրորդը կենդանի է եւ յառաջիկայ Մայիսի 4 ին իր դրական ասպարէզին քսանուհինգամեայ Յոքեյեանը պիտի կատարուի Թիֆլիս : Եզրկտարնակ երախտայայտութեան տարբեր նուէր մը չպիտի՞ ունենայ գաղափարի այդ անխնայ և աննկուն աշխատանքին : « Ուսուցայ գրականութեան » տաղանդաւոր հեղինակին :

Գալթալիցեայ Միսֆերու

Կերեայ թէ Ս. Օ. ի և լս՝ մէջ բացուած փոքր լիճաբանութիւնը կարգ մը ազգասէրներու միաբնակ պղտոր է : Այդ պարանիներուն ըսելիք մը չունի՞ . . . միայն հետեւալ տողերը թարգմանաբար կը ներկայացնեն :

« Գարեբէ ի վեր ի՛նչ բան պահպանեց հրեայն, և ազգերու մէջ անոր անհետայումը արգիւնց . . . Անոր կրօնքը : Արդ, հրեայն պաշտպանող ծէսերը, դաւանանքի այդ զրահը կամ այդ պատեանը, որ զայն պահպանեց երկու հազար տարիներէ ի վեր և զոր ո՛չ մի բան չէր կրնար խորխոցել, ճեղքուեցաւ մեր արեւմտեան մասաւորականութեան առջև : Եթէ ուժասպառ հրեութիւնը կալմալուծուի և քայքայուի հրեայն ի՛նչ պիտի ըլլայ : Երբ զինք կալմուց և պահպանող կրօնքը հալի, հրեայն հրեութեան հետ մէկտեղ միթէ չպիտի՞ անհետանայ » : « Հրեայ » և « Հրեութիւն » բառերու տեղ դրէք « Հայ » և « Հայութիւն » այն ատեն պիտի տեսնուի որ ես ալ ուրիշ բան չ'էի ըսած : Թարգմանուած տողերուն հեղինակն է P. Leroy Beaulieu, և այդ տողերը Լորտ Գրովէր ալ արտասպառ է իր « Ժամանակակից եզրկտարնակ » անուն գրքին մէջ հրեայներուն՝ ներկայ վիճակին վրայ ըրած գրիթէ համանման դիտողութեանց առթիւ : Թէ ո՛վ այդ տողերուն հեղինակը, հետաքրքրները կրնան զայդ գտնել Հանրագիտակ բառարաններու մէջ :

Ձեմ կարծեր որ ուրիշ փաստերու հարկ տեսնուի : Ամեն մարդ կրնայ սխալիլ . բայց նախ կարգանք յետոյ խորհիլք, մանաւանդ դատելու շտապներ . . .

Ա. ՊԱԼԵԱՆ

Թ Ղ Թ Ա Պ Ա Ն Ա Կ

ՆԱՄԱԿ ԵՐՐՈՐԻ
Որուն մէկ օրինակը՝ ապահովագրեալ զրկուած է Երրին Վսեմութիւն Պօղոս Բաշա՝ նուպարի, արդարակորով Ատենապետին Պատկ. Երեմի. Ժողովոյ

Caire, Abassieh 8 Mars 1907

Monseigneur
Meguerditch Aghavnouni
Patriarche des Arméniens de l'Égypte
Au Caire

Monseigneur,
J'ai l'honneur de vous prier de vouloir bien vous conformer à mes deux lettres, que je vous

ai expédiées par l'intermédiaire de la Direction de l'Hôpital, en date du 2 Octobre 1906 et du 23 Février 1907.

J'ai appris aujourd'hui de mes visiteurs qu'on a vendu le 5 courant une autre partie de mes meubles dans lesquels j'avais caché le 1er Volume des Manuscrits du très-regretté feu Monseigneur Ghévont Shishmanian, volume qui renferme un reçu de certains objets dont le prix vaut plus de quatre cents livres, deux cahiers de souscription à ces volumes, deux autres volumes (INEDITS) d'un auteur très renommé, trois paquets contenant des billets d'ordres et d'autres papiers et correspondances très nécessaires, et un cachet grand et carré dont je me suis servi pour cacheter une boîte renferment des pierres précieuses mises en dépôt, une petite valise noire à main contenant des papiers utiles et des papiers de valeurs.

Si le Patriarcat qui est nommé le gérant de mes affaires sans mon consentement, a porté toute l'attention voulue conformément à mes écrits précités, pendant l'enchère et la vente de mes dijs meubles, tout ces articles cachés dans ces meubles, y resteront. Dans le cas contraire, si ces articles ou quelques-uns d'eux sont vendus ou VOLES, vous en serez responsable avec bien d'autres devant la Justice .

Veillez agréer, Monseigneur le Patriarche, mes sentiments distingués.

Ex-Direct. Propr. du Journal arménien
« ARCHALOYCE »
E, Torossian

Ա. Չ. Ա. Յ. Ե

ՈՐԱՒԵՆԱՄ

Ազգ. Առաջնորդարանի կալուածոց Դիւանին Տեսուչ Տիար Միքայէլ Նաթանեան որ միւլենոյն ժամանակ Ատենադպիրն է Որբախնամ Ընկերութեանց Գործադիր Ժողովոյն, «Արշալոյսին» ին պատիւ ըրած է զրկել ի հրատարակութիւն «Առաքումներու» ցուցակ մը՝ զոր ի լոյս կրնձայնք ամենայն սիրով . . .

Թէպէտեւ առաքումներուն վաւերացումը քննած չենք, և միւլեն կողմանէ ի հրատարակութիւն մեզի տրուած նամակին մէջ զրկուած գումարներուն թուականը . չէքբերուն թիւը, որ դրամատան միջոցաւ և որո՛ց անուան զրկուած ըլլալը նշանակուած չեն . սակայն Տ. Մ. Նաթանեան պէտք եղած վստահութիւնը կը ներշնչէ մեզի, իր իւրեւ Ատենադպիր ստորագրած թուղթերը հրատարակուելու աստիճան վաւերական նկատելու համար, հոգ չէ՛ թէ Տիար Նաթանեանի արտաւարտ Ատենադպիրութիւնը վայելի Գործ. Ժողովոյ Դիւանին Ատենապետը, որուն ո՛վ ըլլալը չենք գիտեր դժբաղդաբար, իր զգալի բացակայութեամբը փայլի հոն .

Ապահով ենք որ՝ Տիար Ն. Նաթանեան, իբրև կարող հրապարա-

Թէի եւ կամ հօծէն Սիւրի գրքով հոյու- կապ գրուիս - գործոց մը պիտի գտնուար :

Քրական տեսակէտով ալ պէտք է շնորհաւորել մեր բարեկամ Պ. Պալեանը՝ որուն ոճը ահագին այլափոխում մը կը բերած է այսօր, եթէ բարդատու թեան ել- լէինք այն անցեալ օրերուն՝ երբ Սըմ- րատ-Բիւրատի մէկ բացատրութեան համաձայն, Տաճկերէն կը խորհէր ու հայերէն կը գրէր :

Ս. Օ.

ԿԱՐԵՒՈՐ ՎԻՊԱԿՆԵՐ

Նախորդ 13-րդ թուով Պ. Արշակ Զօպանեանի « Գերթուածներէն » արտա- գրուած « Մովսէս » վերնագրով ստա- նաւորին, վերէն սկսելով երրորդ տուն առաջին բառը փոխանակ « պատմէ » ըլլալու, պէտք է կարգաւ, Պատե՛ ծաւի լայն պատմութեանը այդ ներքին :

Ինչնորոգ տուն. վերջին տող. « Իր գրութեան կատարել գործը յայրատ », Պէտք է կարգաւ. Իր փնտրեան կատարել գործը յայրատ :

ՆԱՅԷ ՈՒ ԱՊՐԷ

— 0 —

Սուրբ իտէալին անօթի, ծարաւ, Ո՛վ այլապէս ալ մտաւ մարդկութիւն Բարոյանալու, ա՛խ. պատուական, Ի՛նչ աղբիւններ, ո՛նչ կը զբոսբոս գոնն . . .

Չանազանները չարքն ու բարին, Լըցուելու համար մաքուր ու ազնիւ Չգացումներով՝ է՛ր զիմա Պարին, Թատրոն-Գարոցին, ջօնսէրթին ւ՛ան- թիւ :

Դեռ ի՛նչ զիտանմ՝ խնձր, ուրիշ աւաղ բիւ՛ր, Պիղծ միջոցներու - մոլութեանց աղ- բիւր . . . Կո՛յր ողորմելի՛, պահիկ մ՛ խելաբբէ՛ :

Մինչեւ ե՛րբ պիտի դու թեզ յար խա- բես, Բաւրդներու մէջ անել՝ խարխափես, Յարաժամ Փըրկչիտ նայէ՛ ու ապրէ՛ :

ՓՈՍՈՒՌԱՅ

ՇԱՀՈՂ ԹԻԻԸ

— 0 —

Հնդկական ԱնթիփԱ վարագոյրին վիճակահանութիւնը սեղի ունեցած է Մեծ Սրճարան Հայկականի մէջ ի ներկա- յութեան Տ. Տ. Միսաք Սարգիսեանի, Ս. Տէր Յովհաննէսեանի, Ներսէս Քէմաճե- անի, Նիկիթ Թորոսեանի, Նիկիթ Բէն- լիվանեանի եւ այլոց, ու շահող թիւն է 140 :

Պ. Արամ Սիրուհեան գնած ըլլա- լով շահող թիւը՝ Սրճարանի Տնօրինու- թեան ստացած է վարագոյրը, ըստ ծանուցման 19 Քրանդի նուէրը հասու- ցանելով :

ՆԱՄԱԿ ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱՅԷՆ

Պատ. Խմբագրութիւն « Արշալոյս » Լրագրի Գահիրէ :

Ձեր նախորդ թուոյն մէջ « Արշա- լոյս » ի համար դժուած ուղղութիւնը կարգաւ յետոյ՝ նպատակայարմար եւ ազգասիրական գտնելով եւ միանգա- մայն այդ տողերէն քաջալերուելով, կը համարձակիմ խնդրել Ձեզմէ որ հա- ճիք հետեւեալ գրութեան անկիւն մը շնորհել Ձեր իրապէս ազգագուս եւ ան- կողմնակալ թերթին մէջ :

ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

« Լուսաբեր » ը՛ որուն կարգ մը ներքին ու շահախնդրական գրողներու անձանօթ չ՛մնացին մեր ազգա- յիններէն շատերը, իր 502 թուոյն մէջ հրատարակած է Տ. Վ. Թէքէեանի մէկ առաջնորդող յօդուածը, որուն մէջ հե- տեւեալ տողերը մեր ուշադրութիւնը գրաւեցին :

« Լուսաբեր » ընթերցատուններու մի- ութիւնը » նախ ունենալով, Պ. Յօղուա- ծագիր - Խմբագրիչը՝ Գրադարանի, Ա- կուսի, Լուսաբեր - Ընթերցատան, զը- րասիրաց, պատանեաց եւ այլն կողմա- կերպութիւններու վրայ խօսելով, կ՛ա- լելցնէ (՞) :

« Ուղղակի ժողովրդէն բղխած, ժողովրդին ուժով պահուող եւ երկտա- սարգութեան լաւագոյն տարրերը իրենց ի գլուխ ունեցող այս հանրային հաս- տատութիւնները, ըստ մեզ շատ աւելի կարեւոր դեր մը (չառ անգամ ախտը դերեր դժբաղդարար. Մ Յ.) կատարե- լու կոչուած են ազգին ներկայ մտաւոր եւ բարոյական անակնորակը մէջ :

« Ձի բաւեր ո՛ր եւ է տխուր տիրա- ցութի մը կամ շահամուր ու դաւաճան խըմ- բակի մը հրատարակած քուրջի կտորը հանրութեան տրամագրել, հանրութեան թողով զայն դատելու հոգը » :

Ի՛նչ ըսել կուզէ արդեօք Պ. Թէ- քէեան իր այդ մտքը մնացած բառերով, կամ զո՞վ ակնարկել կուզէ « դաւաճան խմբակ » բացատրութեամբը : Առաջնոր- դող յօդուածի մը մէջ այդչափ խարխա- փում երբէ՛ն ի վեր ներքին գտած է Պ. Թէքէեան :

Ազգին ներկայ մտաւոր եւ բարո- յական անակնորակը կընդունի, ասի- կայ անձին փորձով հաստատած է, ա- սոր ըսելիք չունինք. Իսկ ո՞րն է « ու եւ է տխուր տիրացութի մը կամ շահամուր ու դաւաճան խմբակի մը » հրատարակած քուրջի կտորը, ի՛նչու այդ քուրջի կը- տորին քովիկը իր ակնարկած հրատա- րակութիւններուն անունն ալ չի դնիր, որպէսզի ընթերցող հասարակութիւնը զգուշանայ անոնցմէ եւ կամ քուրջի կտորներու հետ չ՛չփոթէ ո՛ր եւ է հրատա- րակութիւն : Ինք եթէ ամբողջ լրագրու- թիւնը քուրջի կտոր կընդունի, ապա ուրեմն ալ ի՛նչ պէտք կայ ո՛ր եւ է լր- րագրի աշխատակցի՛ր՝ որ քուրջի կտոր մ՛է : Այս բացատրութիւնը շատ ան- տրամաբանական կը գտնենք եւ ո՛չ նե- րելի զէթ Պ. Թէքէեանի պէս ինքզին- քին հաւնող գրակէտի մը համար :

Պ. Թէքէեան ամեն բանի ալ չի հաւնելիք կընէ ու մեզի գարմանք կը պատճառէ, միեւնոյն ժամանակ կարծե- լով թէ՛ իրեն « երկտասարգութեան լա- վագոյն տարր » անուանելով մեզի ներ- կայացուցածներուն ի՛նչ խառնակներ ըլլալը եւ ի՛նչ կեանք ապրելը մեզի անձանօթ է. միթէ այդչափ միամիտ է Պ. Խմբագրիչը . . .

(՞) Մ. Յ. - Ատոնց նման կազմակեր- պութիւններու ինչ նպատակաւ հաս- տատուելը եւ ի՛նչ նպատակներու գոր- ծածուիլը թող ներքու մեզ առանձին գլուխներով բացատրել, իբր արդիւնք տարիներու փորձառութեանց :

Գալով մեր հարցումին որ հրապա- րակաւ ընելու անհրաժեշտութիւնը կար՝ քանի որ ո՛ր եւ է հասցէի եղած նախա- տինքը հրապարակու եղած էր. կ՛ստի- պենք Պարոն Թէքէեանը, որպէսզի ան- ուանէ շահամուր եւ դաւաճան խմբակի մը հրատարակած քուրջի կտորին որը ըլլալը, հակառակ պարագային իրեն գործածած բառերը իրեն պիտի վերա- դառնան ա՛յնպիսի փաստերու մէջ ծը- բարուած, որոնց դէմ ի պաշտպանու- թիւն իր գրածներուն, բառ մը իսկ չ՛կարենալ գտնելը այժմէն իսկ սպա- հով ենք :

Հաճեցէք ընդունել եւս : ՍՍՄՈՒՆԷՂ ՍԻՐԱՔԵԱՆ

ՄԻՂՐԱՆ ԿԻՒՐՃԵԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԳԵՐՁԱԿ

Խալի փողոց թիւ 12 Էմիլի Կէֆէն- ճիի վաճառատան հետի կողմը :

Կը ծանուցանէ արգոյ ազգայնոց թէ՛ իր վաճառատան մէջ ամեն տեսակ կերպաներ կը գտնուին. ամենէն լաւա- գոյն, դիմացկուն՝ եւ ճաշակաւոր ըզ- դեսները պատրաստուելու համար :

Անկարելի է որ մէկը իրեն դիմէ եւ գոհունակութիւն չ՛յայտնէ՝ ձեւաւոր զգեստի մը սիրացած ըլլալը փորձով հաստատելով :

Արհեստին մէջ իր ունեցած հմտու- թիւնը ամէն տարակուսէ վեր կը մնայ. երբ ըսուի միայն թէ՛ երկար տարիներ պաշտօն ստեղծած է Պոլսոյ նշանաւոր Ֆրանսացի Բալման տանը մէջ :

Իր սակերը դիւրամտաչելի են. այցելեցէք եւ դու՛ք ալ գոհ պիտի մնաք :

14-50

ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆԻ ԱՍԵՆԱԳՈՐԾ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵՏԱՔՈՂ ԲԱՆՈՒԱԾ 400 թիւ թաղարկած ԹԻԻԸ 5 ՂՐԾ. ՈՂՁ

Մեծ սրճարան Հայկականի մէջ ի ցոյց դրուած սոյն անիման մե- տաքսայ ձեռագործի վիճակահա- նութիւնը՝ որուն անցեալ փետրուար ամսոյ մէջ տեղի ունենալը ծանուց- ուած էր, բայց ինչ ինչ պատճառ- ներով յետաձգուած է. անոնք որ սոյն չքնաղ զարդը ունենալ կը ցանկան, ժամ առաջ թող դիմեն « Արշալոյս » ի տպարանը Տ. Գէորգ Փափաղեանի՝ մնացեալ սակաւաթիւ տոմսերէն գնելու համար, որմէ անմիջապէս յետոյ տեղի պիտի ու- նենայ վիճակահանութիւնը Հայկա- կան սրճարանի մէջ կանխաւ ծա- նուցուելով :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՍՈՒԼԹԱՆ

ԱՊՏԻՒԼ ՀՍՄԻՏ ԻՆՉՊԷՍ ՄԵՌԱԻ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ԹԻԻ 3 ԳԻՐՈՅԿԸ

ԳԻՆ ՄԷԿ ՖՐԱՆՅԻ

Գահիրէէն կրնան դիմել ԱՐՇԱԼՈՅՍԻ «Գարաւնը» եւ Արուստաններէն Հե- դիկանիկն հետեւեալ հասցեով .

M. ARAM Grand Café Arménien Le Caire - Egypte

ՏՕՔՔ ԵՍՔԷՐ Լ. ՃԷՔՕՊԵԱՆ ՇԱՐԱ ՆՈՒՊՈՐ ԲԱՇԱ, ԹԻԻ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցնե- րու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վի- րահատ՝ ենթակային առանց ցաւ պատճառուելու :

Մանկաբարձուհի և մանագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և ամբողջիտեան արտերու, իսկ մա- նուկներուն՝ ամէն տեսակ հիւան- դութիւններու :

Կատարեալ խնամքով և գի- տական նորագոյն մեթոտներու շնոր- հիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները :

Հիւանդ կընդունի ամէն օր կիս օրէ յետոյ ժամը 2-5

Ամէն երեւոքի ազգաց ծրի դաստանով :

Է. Ս. ՍԱՐԵՅԱՆ

Է. ԱՅԻՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ Պատկերազարդ եւ 306 փոքրատա երեսներով խիստ շահեկան հատոր մ՛է այս, որուն մէջ հեղինակը՝ իր տեսու- թիւններուն հետ ամփոփած է ստեղծա- գործութեան մասին ցայսօր յայտնուած տարբեր տարբեր, բայց միշտ անորոշ ու կիճոտ, վարկածները :

Այս հատորին բովանդակութիւնն է - Աշխարհածնութիւն. - Այլապատմ. Մագուսն մարդոց. - Միութիւն եւ Հը- նութիւն մարդկային տեսակի ու նախ- կին մարդու վիճակը :

Է. ԱՅԻՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ կը յանձնա- բարուի ամեն անոնց՝ որ աշխարհածը- նութեամբ կը շահագրգռուին :

Գինն է 10 դրիւն. ողջ Միութեան Գործակալութիւն Գահիրէ B. P. 244

ՄԵԾ ՍՐՃԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Մայն Սրճարանը որ Միսալ էլ Խաղեարի օդատուն հրապարա- կին վրայ կը գտնուի, իր մաքրութեամբ եւ ընդարձակութեամբ ճաշակիմ մէջ յարմարագոյններէն մին է հակագահե՛ս ժամանակ անցնելու :

Սրճարանը յաճախողներ վերոյիշեալ առաւելորդիւններէն զատ հոն պիտի գտնեն նաեւ շաւարձիկ ընկեր, նոր եւ ընկեր պիւրատու- ներ եւ անթերի սպասարկութիւն :

ՄԵՓՀԱԿԱՆԱՏԷՐ ՄԻՍԱՔ ՍԱՐԻՍԵԱՆ